…ՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԻՍՐԱՅԷԼ ՍԱՐԿԱՒԱԳԻ

# ՔՆԱՐԻԿ

## ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՁԱՅՆԱԳՐԵԱԼ ԵՐԳԵՐ

ՏԵՏՐԱԿ Ա.

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
Էլէքտրատպ Տպարան Սրբոյ Էջմիածնի
1907

784.4
Բ-72
1347
(28331-ԱՉ)
296-ԱՀ
1347-ԱՉ
12013
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
им. А. Мясникяна
11376-57
2002
784.4
Բ-72
ԱՀ

# ԵՐԿՈՒ ԽՕՍՔ.

Այս 27 հատ ժողովրդական երգը Արարատեան գաւառի վարիանտ է, Ս. վ. Ամատունու ձայնագրած և հաւաքած երգերից ջոկած, որ նոյնութեամբ հրատարակում ենք, միայն կրկնութիւնից խուսափելու համար շատ տեղ փոխանակ մի տուն կամ երկու տող իրանց «լէ լէ»-ներով ձայնագրաց դնելու՝ բաւականացել ենք միայն մի կտորով, որի նման երգւում են բոլորը. իսկ «լէ լէ»ները միայն առաջին տան մէջ ենք դրել, մնացած տներում թողնելով երգողի յիշողութեանը։ Կրկնակները, որոնց անունով շատ անգամ երգն է կոչւում, երկու տեսակ են, որոնցից առաջինը գրւում է առաջին տողի՝ իսկ երկրորդը՝ երկրորդ տողի վերջը։ Երգի սկզբում սովորաբար կրկնակը պէտք է երգել։

Սոքա բոլորն էլ կուսական անարատ սէր են արտայայտում, գեղարուեստի տեսակէտից նոյնքան բարձր են տեկստով, ինչքան նաև մոտիւով։

Հարկաւոր է սոցա ոգին թափանձել միանգամ՝ իմանալու սրանց արժէքը իբրև երգերի։

Մենք հրատարակում ենք իբրև հում նիւթ պարզ եղանակը փոքրիկ բրօշիւրներով առօրեայ երգեցողութեան համար. իսկ ով կցանկանայ գեղարուեստական ձև տալ սրանց, պարտիաներով, զարդարանքով և այլն, կարող է ըստ իւր ցանկութեան թարգմանել եւրոպական։

*Ազգային, ժողովրդական, հոգեւոր եւ այլ տեսակի երգերի մեծ ժողովածու ունենալով մեր ձեռքը, նպատակ ունինք փոքրիկ բրօշիւրներով հրատարակելով տարածել այն մատաղ սերնդի մէջ երգելու համար, որովհետեւ յայտնի է, թէ մարդու հոգին ինչքան է ազնուանում երգերով: Բայց սրանց հրատարակութիւնը ունի ազգագրական արժէք ես, քանի որ երգերի մէջ զանազան հայրենակ գաւառների բարոյական եւ տնտեսական վիճակն է նկարագրուած:*

*Բազմաթիւ գրքերով եւ հանդէսներով լոկ բառերը հրատարակուելով՝ երգերը մնում են միշտ էլ մեռած տառ ընթերցողի ձեռքին, քանի որ նա միայն մի քանի երգերի եղանակը գիտէ: Երգերը կարող են տարածուել միայն եղանակների հրատարակութեան միջոցով:*

*Այս գրքոյկը բովանդակում է 19 հատ խմբական եւ 8 հատ պարերգ, բոլորն էլ աշխկայ վրայ, ուստի եւ պիտանի է համեմատաբար օրիորդաց դպրոցների համար:*

*Թէ ինչքան հնարաւոր է սիրոյ այսպիսի ազատ արտայայտութիւնը մանուկների երգեցողութեան նիւթ դարցնել, այդ մասին խօսուել է Կ. վ.-ի «Հազար ու մի խաղի» հրատարակութեան առթիւ, ուստի կարծում ենք նախապաշարումը բաւականի յետ նահանջած կլինի մեր միջնոլորտում:*

Իսրայէլ Սարկաւագ.

## 1. ՔՆԱՐ.

*Միջակ.*




*Ես վարդ լինիմ դու սոխակ,*
*Այրինք մէկ մէկուս համար:*
*Նա նա նա նա եւ այլն**:*
*Քեզի մօտ ցաւած սրտեր*
*Բաց թողին իրանց դարտեր,*
*Քեզի մօտ կաղեր կուրեր*
*Մոռացան իրանց ցաւեր:*
*Քանց սարի բլբուլի ձէն*
*Քանց դաշտի զով ու հովէն*

---

* (2) *Նշանակում է տողը կրկնել:*

** *Իւրաքանչիւր երկու տողից յետոյ «նա նա» երգել:*

Ծ. Ե.

Անուշ քաղցր է քո գիլ ձէն,
Անուշ քաղցր են քո սմեր:

---

## 2. ԻՆՔՆԱՀԱՒԱՆ ԱՂՋԻԿ.

Միջ.—չափ.

Տա նա նա նա նա նա նա նա
Ես աղ ջիկ եմ բա ղի պէս նա
Շա մամ նե րի թա ղի պէս.

նա նա նա:
նա նա նա:

Ա չ քով ուն քո վ եմ, խել քով
ծո վ եմ:

Իմ եարն ինձ շատ ա սիրում. նա. նա.
Կողբի բերած աղի պէս: Աչքով ևլն.

Նեղ չթերի ծալը չեմ,
Գէշ տղեքանց թայը չեմ.
Ես մի բոյաւոր աղջիկ,
Էն երեխու թայը չեմ:



Տեղ եմ քցել ալվալա[1]
Էրկու թշերիս խալա
Ես էն տղին չեմ ուզում
Էլ էս ինչ ղալմաղալ ա:
Դէզ եմ դրել հաւան չեմ,
Ես իմ գլխին դիւան չեմ,*
Ինձ թէ փերթէք սպանէք
Ես էն տղին հաւան չեմ:

---

## 3. ԱՆԲԱՂԴ ԱՂՋԻԿ.

Ծանր.—չափ.

Եսաղ ջիկեմ հէրչու նիմ, հէրչու նիմ,
հալայ լա, լայլայգիւ լում, լայլայգիւ լում,
լայլայգիւ լում,
Միսըր տացաւ տէրչու նիմ, ալա գեօզ[2]բա լամալա-
գեօզբա լամ: **

---

* Տէրն չեմ:

** Նաև միւս տներում կրկնել առաջին տողից յետոյ հալայ ... երկրորդ տողից յետոյ ալագեօզ... Ծ. հ.

[1] Գոյնզգոյն. [2] Ալագեօզ—գեղեցիկ աչքեր ունեցող:

Հօրից մօրից զրկուած եմ,
Աշխատող աղբէր չունիմ։

Թամին էկաւ սարիցը,
Տերև թափեց ծառիցը,
Շողուն զարտով լցուելա,
Հեռացելա եարիցը։

Բարակ քամին հով բերեց,
Կարկուտ էկաւ սով բերեց.
Քաղաքացի աղջիկ եմ,
Ես գեղ տեղն ո՞վ բերեց։

## 4։ ԳՈՎԵԼԻ ԱՂՋԻԿ.

Միջ.—չափ.




Նոյն ձևով

Էսօր մի գիլբար եմ տեսել
Նոր Թաղա մահբուբ ջիւան էր։ լէ լէ.



Խելք ու իզանն Ասսուն ծառայ
Մօզու քեամալով[1] խիզան էր։ լէ, լէ։
Ծամերդ ծալ-ծալ արբշում
Տղամարդ գնաց գիւան էր, լէ լէ.
Ցնքերդ ղալամով քաշած,
Թարթափդ ղըընկի ջղան էր,[2] լէ, լէ։
Հմի եկել ես աղբրան ծարուն,
Սարն կտրճի սեհրան[3] էր, լէ լէ,
Ընգերդ ծովային քինար,[4]
Եաղուտ զմրուխտի շարան էր։ լէ, լէ.
Մայիլ եմ չալ չալ աչքերիտ
Մին-մին փառփուռի[5] ֆինջան էր. լէ, լէ.
Ես քո մարմառ ճակատն ասեմ,
Բազում կտրճի ղալխան[6] էր։ լէ լէ.

## 5. ԳՈՒԼԼԻՋԱՐ.

Միջ.—չափ.




Դիլբար-սիրեկան, մահբուդ-գովելի. իզան-յիշողութիւն. 1) շնորհալի ձևով. 2) արտևանքդ կռւնկի փետուր էր. 3) զբօսավայր. 4) ափ. 5) յաղճապակիայ. 6) վահան։




Ջէյայ մէկը քեզի պէս, վայ լէ.
Աննման ես շատ խօրօտ։ Թելիկ.
Միպտակ ձին նալն ինչ կանի,
Միրունը խալն ինչ կանի՝
Եարն որ եարին սիրի,
Աստու լիսն* ինչ կանի։
Սարերի սինձն ի՞նչ է.
Կաթն ու բրինձն ի՞նչ է,
Եարն որ եարին սիրէ
Խօսք ու գրիցն ի՞նչ է։
Ես մի ղարիր ղուշ էլայ,
Ջալըմ մարդի Թուշ էլայ,
Զունքի ինձի սիրեցիր,
Ղումսու Թինդ** Թարկ արա։

---

* Աստէ կօսէն։
** Բամբասանքդ։



## 6. ՈՒԽՏԱԴՐՈՒԺ ԱՂՋԻԿ.

Միջակ.—չափ.




Այ տղայ, դուն ասա, ասա, վայ լէ, լէ, լէ..
Գտակիտ ծալը խասա,
Վայ Արշակ, ջան, սիրել եմ, փոշմանել եմ։
Իմ մէրը քեզ աղջիկ չի տալ լէ, լէ...
Իմ հօրը քըԹամ* ասա։ վայ Արշակ.
Ես աղջիկ եմ ալ կուզեմ,
Բոխչէս ծալեծալ կուզեմ,
Երբ որ եարիս տուն երԹամ՝
Գօտիկս Թիրմա շալ կուզեմ։
Ծաղիկ եմ քաղել նարընջի,
Ա՜յ տղայ, վեր արի, փընջի,
Իմ մէրը քեզ աղջիկ չի տալ
Քանի ման գաս եաւընջի (պարապ)։
Ա՛յ տղա, իր անել տուր,
Մի մատը գիր անել տուր.
Ինձանից քեզ ճար չկայ,
Քաքուլդ վեր անել տուր։

---

* քըԹամ-օժիտ։

Գնացի ջուրը լուացք,
Սապոնս էր ոսկեջրած,
Իմ հէրն ու մէրը ինչ անեն,
Ճակատիս էս էր գրած:

---

## 7. ՍԻՐԱՀԱՐ.

Միջակ.—չափ.

Վայլէ լէ լէ լէ լէ լէ լէ լէ լէլէ
լէ լէ լէլէ լէլէ լէլէ լէլէ լէ լէ:

Գարունը նոր ա բացուել. վայ լէ.
Վարդը կոկոմ ա դարձել.

Այ հօ ռում ջան մի ճար ա բա,
Եարա լու սըր տիս իլ լաջ ա բա:

Աղաչանքս չես լսում,
Քու սիրտը քար ա դարձել:
Ցաւում ա Եւա սիրտս
Ծընճղկան թէ ա սիրտս.
Վարդէցը կարմիր չկայ,
Բաց արա սեւ ա սիրտս:



Մի ջաղաց երկու դռնի
Բարձ գլէք եարս կռնի,
Ես դու մի բաղում պտինք,
Ես չինարի դու նռնի:
Մտիկ արէք էն ղշին
Ոտը դրել ա փշին,
Գլուխս ղուրբան կտամ
Զալ աչքին, կարմիր թշին:

---

## 8. ՏՂԱՅԻ ՍԷՐ.

Միջ.—չափ.

Ծա ղիկ ու նիմ շա տ բաց
ա վայ լէ լէ լէ:

Նոյն ձեւով.

Սիրտս քեզ հետ կպած ա. վայ լէ.

Թոպ ճը լիկ* կուպ ճը լիկ Թըլս ճը-
լիկ** աղ ջիկ:

Երբ որ քեզի մօտեցայ
Հիւանդ էի սաղացայ:

---

* Հաստլիկ-լիքը. ** Սեահեր:

Աղջի՛, քու մազերդ շէկ ա
Քու եարը մօրից մէկ ա,
Քու սիրտը եարիդ մօտ ա
Եարաբ քուննդ էլ ո՞ւմ մօտ ա։

Լուսնակը կեռ ու կամար
Եարը մեռնի եարի համար,
Օխտը տարի պաս պահի
Քու սիրու խաթեր համար։

Տուն եմ շինել ղանանայ
Ղառղու կտամ դիմանայ,
Կուռդ մեկնի ջուրն ինձ տուր,
Խմեմ սիրտս հովանայ։

---

## 9. ՄԵՐԺՈՒԱԾ ՍԷՐ.

*Միջ.—չափ.*




Քու ջանին ըլտխար եմ,
Անուշ ես Սեդրակ քնքուշ ես։
Էթաս, էթաս յետ կանգնես վայ լէ.
Իմանաս բլբուլ եար եմ։ Անուշ.
Մազերիդ ծալին մեռնեմ,
Երեսիդ խալին մեռնեմ.



Լսել եմ կարդացող ես,
Սաղմոսիդ ծալին մեռնեմ։

Եարըս նստել Արազին
Կուռը մեկնել ա սազին,
Էս Թառլանը ոնց Թողամ,
Որ առնեմ էն գեաւազին։*

Ջուր ա գալի մեր բակից,
Կոկլիկ քարերի տակից,
Հազար տեղից կորատեն
Ձեռք չեմ քաշիլ Սեդրակից։

---

## 10. ԳԵՂԵՑԻԿ ԱՆՈՒՇ.

*Միջակ.*




Ունքերդ խելքս տարաւ, Ա՛յ Նախշուն.
Թուխ աչքերդ ծով աղջիկ։ Սրտամեռ.

* Դատարկաբանին։

Բաղչայ ասեմ գրախտա,
Մէջը ման գալու վախտա,
Գէշ աղջիկ, սիրուն տղայ,
Էս էլ մի ուրիշ բաղդա:

Ջաղացիս ջուրը տաշած,
Ախլուխըս գիւլը քաշած,
Կեռ-կեռ ունքերիդ մեռնիմ
Ոսկէ ղալամով քաշած:

Արեը ծագեց սարէն,
Կաքաւը կանչեց քարէն,
Իմ սիրածը ինձ տուէք,
Սաղանայ սրտիս եարէն:

---

## 11. ՊԱՆԴՈՒԽՏ ԱՂՋԻԿ.

Միջակ.

Ղա րիբ եմ տե ղըս քար ա
էՙյ դու ն իա* ղա-
րիպն էս ի նչ ա ն ճար ա, վա խում
եմ ղա րիպմեռ նե մ, էյղուն իա

* դունիա-աշխարհ:



էյղուն իա անա ղէ հօ ղը
մըտ նեմ:

Ղարիբ եմ Ղարս գնացի,
Ղարիբ տեղ Հարս գնացի,
Պստկուց ես օր չտեսայ,
Անփայ տեղ Հարս գնացի:
Ես ծարաւ եմ ջուր չկայ,
Սարերին աղբիւր չկայ,
Վախում եմ ղարիբ մեռնիմ
Վրէս էլըղուն (ամբոխ) չըգայ:
Բարխս տակը քարոտ ա
Պարնի ձիանն արոտ ա
Թամամ օխտը տարի ա
Բոյլն աղբօր կարօտ ա:

---

## 12. ԲԱՂԴԱՋՈՒՐԿ ԱՂՋԻԿ.

Ձափ.

Ծարա րա րա րարա րա րա-
րա րա րա րա րա րա րա րա:

Կանաչ սրտիս, ախ, քնարը,
Ով ա տեսել, ախ, իմ եարը.

Իրիկունը իլղար (պայման) տուեց,
Առաւօտը գնաց սարը: Տարա ...
Կանչում եմ (ախ) մօտ չի գալի,
Մի դուզ ջուղաբ (ախ) չի տալի,
Էդ բեմուրված (ախ) շան տղէն,
Խաբվելա (ախ) երկու խալի:
Զախմախ ունիմ (ախ) քար չունիմ,
Եարա ունիմ (վայ) ճար չունիմ.
Էս ինչ բէբաղդ (վայ) աղջիկ եմ,
Որ իմ սրտովս եար չունիմ:
Ջաղացս (վայ) մանի, մանի,
Քունս անուշ (վայ) կտանի,
Իմ եարս (վայ) սարում, քոլում,
Իմ քունս (ախ) ոնց կտանի:

---

## 13. ԱՂՋԿԱՅ ԿԱՐՕՏԸ.

Չափ.






Մեր բաղումը մի ղարան
Շատ հարսն աղջիկ նի ղառան.
Ջեռս տարայ թէ բռնեմ,
Դիփ թազի թուլա ղառան:
Դու նստել ես գերանին,
Ղարղու շուլին բերանին,
Ոսկէ ղայթան 'տի գործեմ
Դնեմ ջիբիդ բերանին:
Ջուրա գալիս լափ տալով
Երկու խնձոր ծափ տալով,
Հրէն եարս գալիս ա
Ալ գդակը թափ տալով:
Գնացի ջուրը տեսայ
Շարաքայ դուռը տեսայ,
Ծլած բեղերիդ մեռնեմ
Իմ մօրս աղիզ փեսայ:

---

## 14. ԵՐԿՈՒ ՍԻՐԱՀԱՐ.

Չափ.




Նոյն ձեւով.

Վայ լէ լէ լէ և լօ, լօ.

Եւ այլն.




Ա՜յ տղայ հաւասիդ մեռնեմ,
Գինուդ կարասին մեռնեմ, վայ լէ, լէ․․
Ճամբէքը նախշող տղայ
Սրտիդ հաւասին մեռնեմ:
Ծառի տակը տալտայա,
Բանի կայնես փայդայեա,
Սիրած սիրածի չեն տալ,
Էս էլ մի նոր ղայդայեա։
Մեր ձիանոց նալ կ՚լնի,
Խամ մինթանես ալ կլնի
Ափսոս իմ թութակ լեզուն
Վախտը գալիս լալ կ՚լնի:

---

## 15. ԱՆԱՄԱՅ ՍԷՐ.

Չափ․




Բերանը բաց եմ տանում․ նա նա․․․
Տես քեզ ինչքան եմ սիրում,



Ջուկը տապկած եմ բերում:
Կանաչ խաւէն քիսացու,
Կարմիր կովը մսացու,
Դու իմ նանին փեսացու,
Ես քու նանին հարսնացու:
Մատանիս ոսկեջրած,
Ես քու սիրով գնջըլուած․
Սաբաբին ինչ մեղք ունի,
Ճակատիս էս էր գրուած:
Հոտով ռեհան մաղա ես ա
Ամեն ծաղկից թազա ես,
Ամեն գինի խմելիս,
Դու ինձանից թազա ես:

---

## 16. ԱՆԲԱՂԴ ՆԱԶԼՈՒ.

Չափ․




Ղուկաս կայնել դռանը, եար,
Նազլուն եմ, կորել եմ, կորել եմ:
Մեր Նազլուն չայփայ կայնել եար, վայ լէ․․
Աստուած կանգնի կռանը եար․ Նազլուն․
Սբրէն (սկեսայր) հանդէն գալիս ա,
Աղլուխ բռնած լալիս ա,

Հաւար եանդըմ սալերը՝
Նազլուն ընկաւ գեօլերը։
Կեսար տանէն գալիս ա,
Հարսը տանը լալիս ա,
Շալ մինթանէս ծախեցէք,
Մամիկոնիս պահեցէք։
Հոռոմի քաշած օրը՝
Մեծ քերն ընկաւ Ջրհորը․
Աղբէր տանէն գալիս ա,
Ջեռով գլխին տալիս ա։
Թռչի դու Թռդ քցա,
Նազլուին դու միտդ քցա,
Գաբոն Կարբու գալիս ա,
Աղլուխն ձեռին լալիս ա։

---

## 17. ԲԱՂԴԱՒՈՐ ՍԷՐ․

Ձափ․—միջակ․




Երեսդ բոլոր լուսա,
Անհատ սաւդէն էսպէս ա,



Բաղը սեհրան ըլէլիս
Բլբուլից քաղցր խօսա։
Եարս մի ըԱէլ լեզի,
Դուշմանի սրտումն ըլի, նա նա․․
Նիմըտի բուրաստանը,
Վարդ ու մանուշակ քաղի։ Նա․․․
Մուղնվայ Ջուրը սառն ա,
Մուղնի գնացողն իմ եարն ա, Նա․․․
Երթայ մուրազն առնի,
Յետ գառնայ սիրածն առնի։ Նա․․․
Ով տնարար եար ունի,
Տանը անգլին քար ունի, Նա․․
Դարդ ասածը չի գիտայ,
Ոսկի ծլոզ սար ունի։ Նա․․․

---

## 18. ԲԼԲՈՒԼԻ ՏԱՂ․

Ձափ․—միջակ




Ոչ սէրդ թող եմ տալիս,
Ոչ ինձ աւաղ եմ ասում։ վայ լէ․․
Նոր բացուած վարդն երեսիդ,
Լիսհան, ես տաղ եմ ասում։

Բարեխօս ճարտարաբան,
Քաղցրաբարբառ եմ ասում.
Քո հարիր գեղեցկութեան
Մի մասն անջաղ եմ ասում: (աշուղ)

---

## 19. ՍՊԱՍՈՂ ՀԱՐՍ.

Չափ.


Նախ րա տա փին խըն կի ծա ռ


ա ման եար:


Նախ շուն կա քաւ վը րէն թա ռ


ա ման եար:

Ուրբաթ շաբաթ քեզ մուհլաթ,
Գալ կիրակի արի տար:
Արագեացի ճիլ խոտը
Շան տըղի անուշ հոտը.
Բխով էլաւ, ոտս ընկաւ,
Մխակ էլաւ՝ ծոցս ընկաւ:
Ջուն գնեմ, թաւէն խաշեմ,
Գնամ կտրռմը եաշեմ,
Տէնամ եարս գալիս ա,
Զոքեմ չաքմեքը քաշեմ:



## 20. ՊԱՐԵՐԳԵՐ.

Չափ.


Վայլէ լէ լէ լէլէ լէ հոմնա նուշ հոմնա-


Նուշ եարխօ լօտիկ պաղնա նուշ:

Ջառբաբից չադիր շինեմ,
Քեզ ինձ մօտ ղոնաղ բերեմ,
Ասա, խօսելուդ մատաղ,
Կարօտս քեզնից առնեմ:
Թուանքը յուսիդ դրած,
Ջախմախը ոսկէջրած,
Աչք ու ունքիդ հաւան եմ,
Ափսոս ռանկդ ա թռած:
Թազա մածուն եմ բերել,
Փեսին ղոնաղ եմ բերել,
Կատուատէր որդին մեռնի,
Ին էլ կատուն ա կերել:
Տղայ տղայ, մեր տղայ,
Վարդի հոտը բեր տղայ,
Գառը կորկոտ եմ դրել,
Խուփը վեր կալ, կեր, տղայ:

---

21.

Չափ.

Ամպել ա ձիւնչի գալի մըթնե լա տուննչի
գալի.

Հեռու տեղ հօր տուն ունիմ,
Մի մատը գիր չի գալի,
Սարեր, սարեր, ա՜յ սարեր,
Տարէք իմ եարիս բարև:
Զաղացիս աջու կուռը,
Կ'ցընծայ միջի գիւլը. սարեր...
Վայ իմ սիրած բլբուլը
Բաշեցին խանի դուռը: սարեր...
Կողբայ քարեր ճղվելա,
Եարս միջին քնելա,
Ձէն տուի ձէնս չառաւ,
Էդ ինչ քաղցր քնելա:
Ծառի տակին երկու ղօչ
Մինը փնջած, մինը ոչ
Փառքիդ մեռնեմ, ա՜յ Աստո՛ծ,
Մընին կտաս մընին ոչ:

22.

Միջակ.—չափ.

Գետուն ջու ըը սա ռել ա տա բարա
բա բա բա բարա բա բա բա բա:



Նոյն ձևով,
Ղաման ձեռս տարել ա,
Բելայ մեր բաղը
Ցարշած օթաղը:
Թուխ բեխաւոր չա՛ տղէն տարա, բա...
Գլխիս խելքը տարելա: Բէլա..
Կողբայ աղերը բերին,
Խախալ՝ մաղերը դրին,
Նաշխած աղլուխ եմ պահել,
Մեզ պսակող տէրտէրին:
Տեղ եմ քցել փոթ կտայ,
Եարը եարի մօտ կգայ
Մեռնեմ բոլոր քեաքուլին,
Միջից խնկան հոտ կգայ:
Զաղացս կանի ձաւար,
Դուշմանի աչքը խաւար,
Ա՛յ տղա, հօրս կամքն առ,
Զայնամ ձեր օխտը տաւար,

23.

Չափ.

Վայլէ լէ լէ լէ լէ լէ լէ լէ լէ
լէ լէ լէ լէ:

Կաքաւ եմ սար ման կուգամ,
Բլբուլ եմ, բաղ ման կուգամ։ Վայ լէ լէ․․
Հազար ու մի դարդ ունիմ,
Հէնց գիտաս սաղ ման կուգամ։ Վայ լէ․․․
    Բերդի բոլորն աւազ ա,
    Յուստի գիւլբէն գեաւազա,
    Յ՛ուստա, վանքը գլուխ բեր,
    Ուխտաւորի մուրազա։
Սև ծիտ եմ, սիպտակ ծիտ եմ,
Ձեր բաղին ծիրան կիտեմ,
Ի՞նչ մուշտուլուղ ես տալիս,
Որ քու եարիդ տեղն ասեմ։
    Բաթան շապիկ եմ կարել,
    Մէջը խնձոր եմ շարել,
    Փառք ըլնի իմ Աստուծուն,
    Սրտով սիրածս եմ առել։
Արև դու անցի գնա,
Կանգ տուր, շուտ անցի գնա,
Իմ եարին որտեղ տեսնաս,
Բարև տուր անցի գնա։

---

24.

*Միջ․—չափ․*



Լէլէ լէ լէ լէ լէլէ լէ լէ լէլէ լէլէ



լէ լօլօ լօ լօ լօ լօ լօ լօ լօ լօ լօ



լօ լօ լօ։



Ոսկէ մատնիք մատներիս,
Շողքը ընկաւ երեսիս,
Աքլոր ինչու կանչեցիր,
Անքուն կանես իմ եարիս։ լէ․ լէ․․․
    Ամպերը ամպի վրայ,
    Ամպերը սարի վրայ,
    Ամպեր, Աստուած կսիրէք,
    Ջանձրևէք եարիս վրայ։
Բող ձի քու նալիդ ղուրբան
Ծամի պէս եալիդ ղուրբան,
Ինձ թէզ իմ եարին հասցրայ
Բու սիրուն խալիդ ղուրբան։
    Ձիուս անունն Արաբ ա,
    Խուրջինինս քեաբաբա,
    Կորցրել եմ չէկլիկ եարս,
    Նազուկ սիրտս խարաբա։
Ամպերը կապիտ կապիտ
Գիւղը տանի տատիդ,
Տատիդ գիրկապ անել տուր,
Շուտ կըհասնիս մուրազիդ։

---

25.

*Միջ․—չափ․*



Արի գընանք մերտու նըտես Եղսօ ջան, ղանգու

Շաքար կոտրեմ ուտես, Եղսօ ջան հոգի ջա ն
քեզզուր բան Եղսօ ջան։

Ման ես գալիս քուչայ քուչայ, Եղսօ ջան.
Պոպոկ տուի մէջը փուչա ա, Եղսօ ջան.
Ման ես գալի կտրներին
Սազրի մաշիկ կրնկներին։
Ման ես գալիս եանայ եանայ.
Կարմիր Թշեր, սիպտակ չանայ։
Բեզի տուիր սարի դօշը
Մատդ մտնի աստղափուշը.
Երեւանայ եկաւ համեմ,
Սիրտս սրտիդ մէջը քամեմ։
Աղբէրտանքդ ղրկի ազի,
Անտէր սէրս շուտ չի պազի։

---

26.

Միջակ.

Մելի քիծի նը կապուտ, (2)
Մելը քինդը րին Թափուտ. վայլօ լօլօ լօլօ լօ լօ
վայլէ լէլէ լէլէ լէլէ ։



Խաբար տարէք Վավալին, (2)
Վրէն քաշին սեւ մահուդ. վայ լօ..
Գուլթանը էլաւ դարձաւ,
Մելիքը քօչը բարձաւ,
Անա, դու նստի լացի,
Մանդր բալէքդ լացի։
Լուսնակը արըն ցերեկ,
Գեօքչըվայ հէքիմ բերէք,
Ծակատիս ոսկիք տարէք,
Մելիքին մի ճար արէք։
Մելըքի ձիան ղաշը,
Մելիքին դրին նաշը,
Խաբար տարէք Վավալին,
Հանին Մելըքի նաշը։

---

27.

Զափ.

Մա րալօ վախմա րալօ մարա լօ.
Մա րալօ սարի աղջիկ դարա լօ.
Մարալօ* Գնացի ջուրը ջրի
Ոտս ընկաւ օձի լեղի,
Իմ հօրն ու մօրն ինչ ասեմ,
Ինձ տուին ղարիբ տղի։

---

* Իւրաքանչիւր տողի սկզբին «մարալօ» երգել. Ծ. Հ.

Արեւն ընկաւ մեր պատին,
Արքայութիւն իմ տատին,
Հոգիդ ղատուի, ա՜յ տատի,
Ինձ խի տուիր կոնատին:
Բաղումս կայ բաղմանչի,
Շուին ածի ու կանչի,
Թափուն ղառած դուրս եկան
Մինն իմ եարի նման չի,
Սարի Թրթնջուկ Թաղա,
Սաւզա մեխակ քեզ մաղա,
Ինձ պէս նազանի աղջիկ
Քեզ պէս տղին ոնց սաղայ:

ՀՍՍՌ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ЗУАО-Арм. ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Ախտահանված է 1957թ.

# ՑԱՆԿ

երես

1 Քնար . . . . . . . . 5
2 Ինքնահաւան աղջիկ . . . . . . 6
3 Անբաղդ աղջիկ . . . . . . 7
4 Գովելի աղջիկ . . . . . . 8
5 Գիւլիզար . . . . . . . 9
6 Ուխտադրուժ աղջիկ . . . . . 11
7 Սիրահար . . . . . . 12
8 Տղայի սէր . . . . . . 13
9 Մերժուած սէր . . . . . . 14
10 Գեղեցիկ Անուշ . . . . . . 15
11 Պանդուխտ աղջիկ . . . . . . 16
12 Բաղդաւորկ աղջիկ . . . . . 17
13 Աղջկայ կարօտը . . . . . . 18
14 Երկու սիրահար . . . . . . 29
15 Անկամայ սէր . . . . . . 20
16 Անբաղդ Նաղլու . . . . . . 21
17 Բաղդաւոր սէր . . . . . . 22
18 Բլբուլի տաղ . . . . . . 23
19 Սպասող հարս . . . . . . 24
20 Հոմն անուշ . . . . . . 25
21 Ամպեկա ձիւն չի գալի . . . . . 26
22 Գետուն ջուրը սառել ա . . . . . 26
23 Կաքաւ եմ սար ման կուգամ . . . . 28
24 Ոսկէ մատնիք մատներիս . . . . 39
25 Արի գնանք մեր տունը տես . . . . 39
26 Մելիքի ձինը կապուտ . . . . . 30
27 Մարալօ . . . . . . . 31

ՀՀ Ազգային գրադարան
NL0684098

ԲՈՒՆ. ԳԻՆԸ 198
10 Ռ. Կ.
1347
Եռյակ
784
Ք-72